ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(Պ-611-13.05.2020-ՏՏԳԲ-011/0),*(Նախագիծ 1)
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-611[1]-13.05.2020-ՏՏԳԲ-011/0), (Նախագիծ2)

ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	*ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ*
1.	Հեղինակներ	Նախագիծ 1-ի՝ 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «**Հոդված 1.** «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 18.1.-րդ կետով՝ «18.1. համայնքի ղեկավարի առաջարկությամբ հաստատում է համայնքի սեփականություն հանդիսացող այն վայրերը, որտեղ	Ընդունվել է	Ընդունվել է

			կազմակերպվում է տրանսպորտային միջոցի վաճառքը կամ վարձույթը, ինչպես նաև կարող է սահմանել այդ վայրերի վճարի չափը.» »;		
2.	Հեղինակներ	Նախագիծ 1-ի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 18.1.-րդ կետով՝ «18.1. ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի սեփականություն հանդիսացող այն վայրերը, որտեղ կազմակերպվում է տրանսպորտային միջոցի վաճառքը կամ վարձույթը, ինչպես նաև կարող է առաջարկել սահմանել այդ վայրերի վճարի չափը.»:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Հեղինակներ	Նախագիծ 2-ի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 12-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր 124.8-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

			հոդվածով՝«Հոդված 124.8. Վաճառքի կամ վարձույթի ենթակա տրանսպորտային միջոցները չնախատեսված վայրում կայանելը 1. Վաճառքի կամ վարձույթի ենթակա տրանսպորտային միջոցների սեփականատիրոջ կողմից համայնքային նշանակության ճանապարհների վրա՝ կայանման համար նախատեսված վայրերում տրանսպորտային միջոցները կայանելը, եթե համայնքի ղեկավարի որոշմամբ տվյալ վայրը չի սահմանվել որպես վաճառքի կամ վարձույթի ենթակա տրանսպորտային միջոցների կայանման վայր՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասապատիկի չափով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով		

			նախատեսված խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց երեք օր հետոկրկին անգամ՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով: 3. Սույն հոդվածի իմաստով վաճառքի կամ վարձույթի ենթակա տրանսպորտային միջոց են համարվում այն տրանսպորտային միջոցները, որոնց վրա (կամ այլ վայրում) առկա է՝ վաճառքի կամ վարձույթի մասին գրառում:»:		
4.	Հեղինակներ	Նախագիծ 2-ի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող վաթսուներորդ օրվանից:»:	Ընդունվել է	Ընդունվել է

5.	Հեղինակներ	Նախագծերի փաթեթ:	Նախագծերի փաթեթը լրացնել նոր՝ «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծով	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Հեղինակներ	Նախագծերի փաթեթ:	Նախագծերի փաթեթը լրացնել նոր՝ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծով	Ընդունվել է	Ընդունվել է